



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2014 թվականի N Մ- 683 -Ա

քաղ. Երևան

**«ՎՈՐԼԴ ՎԻՃԸ ԻՆԹԵՐՆԵՑՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ  
ԱՍՏԻՍԻՍԵՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԿԱՍՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ  
ԶԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հուլիսի 8-ի N 02/4795-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 03/07-1/7775-14, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 07/80-2/9093-14 ու N 06/3-3/9135-14 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2014 թվականի հուլիսի 8-ի N 02/4795-14 եզրակացությունները, որոշում է.*

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռումանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 5,594,877 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի Կամոյի համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեկուսիչ» արտադրական կոդպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 04701782) 2014 թվականի մայիսի 30-ին կնքված N WVA/AMAS ADP/CW-HT-14/001/FY14 պայմանագրում նշված

գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի տեղադրման և արտաքին ջրագծի անցկացման աշխատանքների իրականացում՝ 5,594,877 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ